ճած։ Բաղդատած իր անմիջական հարեւաններ-ի հետ՝ նա գտնւում է շատ աննպաստ պայմաններում։ Թէ՛ իր տարածութեամբ, թէ՛ բնակիչների թուով եւ թէ՛ տնտեսական ուժով մեր երկիրը շատ եւ շատ յետ է իր հարեւաններից։ Դրա հետեւանքով՝ թեթեւ է նաեւ Հայաստանի ազգային-պետական կշիռը։ Հայաստանի հողերի եւ բնակչութեան մի զգալի մասը կցուած են հարեւան հանրապետութիւններին։ Հայ ժողովուրդի գրեթէ կէսը — չհաշուած արտասահմանը — ապրում է Հայաստանից դուրս։

Հայ ազգային քաղաքականութեան առջեւ դրուած են երրեակ խնդիրներ։ Նախ՝ ուժեղացընել հայութիւնը իր ներկայ հայրենիքում եւ Հայաստանը՝ իր արդի սահմաններից ներս։ Այդ կարելի է անել՝ աճող բնակչութեան յաւելումը ներսը պահելով եւ արտադրթի առաջն առնելով։ Այդ կարելի է եւ պէտք է անել նաեւ՝ դրսից արիւնակից բազմութիւններ մաս-մաս Հայաստան փոխադրելով։ Հայահաւաքումը հայ ազգային քաղաքականութեան առաջին խնդիրն է։ Առանց հայահաւաքման չկայ ո՛չ մշակութային եւ տնտեսական ուժերի, ո՛չ էլ հայկական հողերի կենդրոնացում։ Մի զգալի չափով հայահաւաքումը հնարաւոր է անդամ ներկայ Հայաստանում։ Նրա այսօրուան սահմաններում իսկ՝ պատերազմից առաջ 200 հազարից աւելի բնակիչ էր ապրում, քան այսօր։ Ապա, Հայաստանի ռուս եւ թուրք գիւղացիութեան իրաւահաւասար դարձնելով հայ տարրը, եւս 100 հազար բնակչութեան համար տեղ պիտի բացուէր ներկայ Հայաստանում։ Այս նշանակում է՝ արդի սահմաններում եւ նախապատերազմեան տնտեսական չափանիշով իսկ՝ Հայաստան առնուազն 300 հազար բնակիչ աւելի կարող է ունենալ,— ընդամէնը 1 միլ. 200 հազար։ Ապա, քոչուորութիւնը աստիճանաբար վերացնելով եւ տրամադրելիք հողեր ունենալով՝ Հայաստան դարձեալ 100 հազար շունչ աւելի կերակրել կարող է, կըրկին հին չափանիշներով։ Իսկ եթէ նկատի ունենանք, որ աշխարհիս հետ մեր երկիրն եւս քիչ-շատ առաջադիմում է, որ՝ տնտեսական նորանոր աղբիւրներ են բացւում աստիճանաբար, իսկ դրանք քիչ-շատ ազատ պայմաններում շատ աւելի ընդլայնուել կարող են — ճարտարարուեստի զարգացում, գիւղատնտեսութեան կատարելագործում եւայլն — ապա պիտի համոզուինք նաեւ, որ նոր բազմութիւններ ներս ընդունելու կամ բնակչութեան յաւելումը երկրում պահելու հնարաւորութիւնն է ստեղծւում դրանով։ Մոռնալու չէ վերջապէս, որ 150 հազար դեսեատին ամայի հողեր կան մեր երկրում։ Մշակելի դարձնելու պարագային՝ դրանք նուազագոյն 150 հազար աւելի բնակիչ կերակրել կարող են։ Եւ արդէն իսկ մաս-մաս կատարւում է այդ աշխատանքը։ Կարճ՝ քիչ-շատ տնտեսական խոհական քաղաքականութիւն, բայց նաեւ ազգային առողջ քաղաքականութիւն վարելու պարագային՝ Հայաստան իր ներկայ սահմաններում անգամ՝ նուազագոյն 1½միլիոն բնակիչ ապրեցնել կարող է։ Եւ այդ թիւը նա կ՚ունենայ մի 10–15 տարի յետոյ — վերոյիշեալ նախապայմանները կիրառելու պարագային։ Հայաստանի բնակչութեան յաւելումը հէնց՝ դեռ 2–3 տարի առաջ 30 հազար էր. մի 2–3 տարի յետոյ էլ նա 50 հազարի կը հասնի։ Այդ նշանակում է, որ ժամանակի հետ քալելով, յար եւ շարունակ կատարելագործելով իր տնտեսութիւնը, Հայաստան մինչեւ իսկ 2 միլիոն բնակիչ ունենալ կարող է։ Իսկ դա արդէն ուժ է, թէ ազգային-քաղաքական եւ թէ մշակութային։ Նշանակում է ուրեմն՝ արդի Հայաստանը ո՛չ միայն առհասարակ մեր ազգային քաղաքականութեան ելակէտը պիտի հանդիսանայ, այլ եւ հիմնաքարը, մեր գոյութեան միա՛կ խարիսխը։

Դրանով պիտի ղեկավարուինք նաեւ՝ մեր ազգ.-քաղաքականութեան երկրորդ եւ երրորդ հիմնական խնդիրներին մօտենալիս.— ի՞նչպէս անենք, որ ապահով վիճակ ստեղծուի ներկայ Հայաստանի համար, որ նա հեռու պահուի նորանոր ցնցումներից։ Դա հնարաւոր է, անկախ մեր ներքին կարողութիւններից, համաձայնութեան դեռին մշակելով մեր հարեւանների հետ։ Այդ ճանապարհով ջանալու է՝ նրանցից յետ ստանալ մեր կապտուած հողերը։ Ո՛ր չափով որ դա գոնէ հնարաւոր է։ Փոխադարձ հասկացողութեամբ։ Մեր հարեւանները գիտնալու են, որ անդամ մեր առաւելագոյն պահանջները իրականացնելու պա-